ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/125

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Արթենյանի, Ս. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և քիմիական նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4597-2022 գրությամբ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 11.03.2022թ.-ի թիվ 09/292 գրության հիման վրա, 18.03.2022թ.-ին «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.03.2022թ.-ին:

18.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/125 համարի ծածկագիրը:

25.03.2022թ.-ին և 08.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2022թ.-ին:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամն 11.03.2022թ.-ի թիվ 09/292 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«2022 թվականի փետրվարի 23-ին «Երևանի Մխիթար կերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ համալսարան/ կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ապրանքների գնման ընթացակարգ: Ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի մարտի 7-ի 2-րդ նիստի 4-րդ որոշման 1-ին կետով «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին մարտի 7-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն

ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերությունն արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, ինչի արդյունքում 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերի պահանջներին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերների 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ «ԷԱՃԱՊՁԲ-2021/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով գման գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. 3-րդ նիստի 2-րդ որոշմամաբ մերժվել է «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերության հայտով ներկայացված 5-րդ չափաբաժինը հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի խնդրահարույց չափաբաժնի գնումների պլանում ներառված լինելու փաստն ապացուցող քաղվածքը, հրավերի տեխնիկական բնութագրերը պարունակող քաղվածքները /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am և www.eauction.armeps.am կայքերում/, «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերության կողմից ներկայացրած սկզբնական և շտկված հայտերի արտատպումները էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգից, ընթացակարգի արձանագրությունների պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 28.03.2022թ.-ին ներկայացված 09/363 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում ՍՅ-ԼՕ-2022/125 ծածկագրով նախաձեռնված ընթացակարգի քննության նպատակով 25.03.2022թ. տեղի ունեցած նիստի ընթացքում «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից հնչեցրած մի քանի

պնդումների վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ դիտողությունները:

Շտկման ծանուցումը մասնակիցներին, այդ թվում Ընկերությանն ուղարկվել է մարտի 7-ին և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկումներ: Շտկումները հանձնաժողովին հասանելի են դարձել մարտի 10-ին, քանի որ մարտի 8-ը ոչ աշխատանքային օր էր: Գնահատող հանձնաժողովի կողմից շտկման գնահատումներն էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում /այսուհետև՝ Համակարգ/ իրականացվել են մարտի 10-ին, որից հետո նույն օրը ժամը մոտ 15:30 քարտուղարի կողմից Համակարգում իրականացվել է շտկման գնահատման ամփոփում: Այդ գործողությունից հետո միայն Ընկերությանը հասանելի է դարձել մերժման ծանուցումը, և միայն մարտի 10-ին ժամը 18:09-ին Ընկերության կողմից քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային փոստին ստացվել է խնդրանք ընդունել կցված ֆայլում ներառված շտկված տեխնիկական բնութագիրը և ոչ թե մարտի 8-ին, ինչպես պնդում է Ընկերությունը, քանի որ մարտի 8-ին գնահատող հանձնաժողովին անգամ հասանելի չէին շտկումները ու հետևապես դրանք չէին կարող գնահատված լինել: Բայց անգամ մարտի 8-ին ստացված լինելու դեպքում այդ տարբերակն ընդունելի չէր լինի, քանի որ Համակարգով գնման ընթացակարգ կազմակերպելիս բոլոր շտկումները պետք է կատարվեն Համակարգում, հակառակ դեպքում դրանք չեն ներառվում պայմանագրում: Այստեղից ինքնաբերաբար հանգում ենք Ընկերության այն պնդմանը, որ հենց Համալսարանի կողմից շտկումները բազմիցս ընդունվել են էլեկտրոնային փոստին ուղարկվելու տարբերակով: Իսկապես, միշտ և բոլոր մասնակիցների կողմից համալսարանն ընդունել է շտկման այդ տարբերակը, քանի որ գնման ընթացակարգերը կազմակերպվում էին գնանշման հարցման եղանակով և պայմանագրերը կազմվում էին քարտուղարի կողմից և հետևապես պայմանագրում ներառվում էին մասնակիցների կողմից լրացուցիչ ներկայացված բոլոր շտկումները: Իսկ այս դեպքում գնման ընթացակարգը կազմակերպվել է համակարգի միջոցով և պայմանագիրը կազմվում է համակարգի միջոցով ինքնաշխատ, ուստի պայմանագրում ներառվում է միայն մասնակցի կողմից համակարգ ներբեռնված տեխնիկական բնութագիրը, այսինքն առանց շտկման ուղարկված նախադասության, հետևապես թերի:

Այժմ անդրադառնանք բողոքներ քննող անձի այն դիտողությանը, որ «Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:» նախադասությունը տեխնիկական բնութագրի բաղկացուցիչ չէ և պետք է

գրվի «ներքևում»: Համակարգի միջոցով գնման ընթացակարգ հայտարարելիս ինչպես և պայմանագիրը, հրավերը նույնպես կազմվում է համակարգի կողմից ինքնաշխատ քարտուղարի կողմից մուտքագրվող տվյալների հիման վրա: Համակարգում քարտուղարի համար խմբագրելի միակ դաշտը տեխնիկական բնութագրի դաշտն է, ուստի բոլոր պահանջները ներառվում են հենց տեխնիկական բնութագրում: Հետևապես և վերոհիշյալ պայմանը, և բեռնակրման և բեռնաթափման, և երաշխիքային սպասարկման, և նմանատիպ այլ պայմանները պատվիրատուների կողմից ներառվում են հենց տեխնիկական բնութագրում:

«Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերությունը հանդիսանում է համալսարանի վաղեմի և պարտաճանաչ մատակարարներից մեկը, ուստի խնդրում ենք արձանագրել, որ Համալսարանը ոչ թե պայքարում է Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, այլև իրականացնում է գնումների օրենսդրությամբ իրեն վերագրված պարտականությունները:»:

3. <u>«Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.03.2022թ.-ի գրությամբ դիմել է «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4597-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն 23.02.2022թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ԼԱԷԿԱ» ՀՁ ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԱՕ-2022/125 ծածկագրով ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ֆինանսների նախարարություն է ներկայացրել 11.03.2022թ թիվ 09/292 գրությունը և կից փաստաթղթեր: 23.02.2022թ «Երևանի Մխիթար Հերացու անվան

պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ապրանքների գնման ընթացակարգ: 07.03.2022թ թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «ԼԱԷԿԱ» ՀՁ ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: «ԼԱԷԿԱ» ՀՁ ՍՊ Ընկերությունը շտկել է բոլոր անհամապատասխանությունները: Հաշվի առնելով աճուրդի գնման էլեկտրոնային համակարգի ոչ կայուն աշխատանքը և ունենալով նախադեպեր 08.03.2022թ-ին ժամը՝ 15:06-ին Ընկերության կողմից հավելյալ ուղարկվել է նաև շտկված տեխնիկական բնութագրերի օրինակը, սակայն 10.03.2022թ ժամը 10-ի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Մեր Ընկերությունը մասամբ է շտկել անհամապատասխանությունը՝ 5-րդ չափաբաժնով մեկ նախադասություն դուրս է մնացել ընդհանուր տեքստից: Արձանագրությամբ վերը նշվածի մասին տեղեկանալով 10.03.2022թ ժամը 18:08-ին նորից ուղարկել ենք Պատվիրատուի էլեկտրոնային փոստին 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի ճշտված տարբերակը: Ընկերությունը տեղեկացնում է Ձեզ, որ այս ամենը տեղի է ունեցել տեխնիկական պատճառներով և ոչ մի միտում չունի: Ընկերությունը չէր կարող շտկել 1-ին, 4-րդ, 8-րդ չափաբաժինները և մասամբ շտկել 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի տեքստը:

Ելնելով վերը նշվածից խնդրում ենք ներողամտաբար վերաբերվել մեր թերացմանը, չնայած այն հանգամանքին, որ ամեն ինչ արվել է Ընկերության կողմից՝ շտկման առումով խնդիր չառաջանալու համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2022/125 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 23.02.2022թ.-ին հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.03.2022թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փստաթղթերը, սակայն 1-ին, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է ավելացնել «Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:» նախադասությունը /հրավերի պահանջ/, 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրից անհրաժեշտ է հանել «Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ ստեղծողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:» նախադասությունը:

v. Արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը և գնման ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն արձանագրված անհաքապատասխանությունները շտկել է մասնակի՝ 1-ին, 4-րդ և 8-րդ չափսբաժիններում հավաստել է «Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:» հրավերի պայմանը, 5-րդ չափաբաժնում՝ ոչ:

vii. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետը, որոշել է մերժել «Լաէկս» ՀՁ ՍՊԸ-ի հայտը 5-րդ չափաբաժինի մասով՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4597-2022 գրությամբ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ

գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ-ի կողմից դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 23.02.2022թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ

բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 23.02.2022թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.03.2022թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետով արձանագրվել է, որ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փսատաթղթերը, սակայն 1-ին, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է ավելացնել «Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:» նախադասությունը /հրավերի պահանջ/, 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրից անհրաժեշտ է հանել «Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ ստտաղրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:» նախադասությունը, ինչով պայմանավորված արձանագրության 6-րդ կետով որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն արձանազյված անհաւքապատասխանությունները շտկել է մասնակի՝ 1-ին, 4-րդ և 8-րդ չւսփաբաժիններում հավաստել է «Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը:» հրավերի պւսյմանը, 5-րդ չափաբաժնում՝ ոչ, ինչով պայմանավորված արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել մերժել «Լաէկւս» ՀՁ ՍՊԸ-ի հայտը 5-րդ չափաբաժինի մասով՝ հրավերով նւսխատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ,

խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4597-2022 գրությամբ «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/125 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Լաէկա» ՀՁ ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**